Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____2021 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 30-ի «**Կենսաբանական ակտիվ հավելումների ցանկը, թույլատրելի մակարդակները, դրանց արտադրության մեջ օգտագործվող վիտամինների ձևերը և արգելված բույսերի ցանկը հաստատելու մասին**» N 1210-Ն որոշումը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 30-ի **«Շշալցված խմելու ջրին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 1240-Ն որոշումը.**

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 30-ի «**Պարենային հումքի արտադրության ժամանակ կենդանական ծագում ունեցող սննդամթերքում անասնաբուժական դեղամիջոցների առավելագույն մնացորդային մակարդակները հաստատելու մասին**» 1207-Ն որոշումը.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի

հոկտեմբերի 30-ի «**Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու մասին**» 1205-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: